**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան 02 օգոստոսի 2018թ. ժ. 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հայրապետյան, Ռ.Մուրադյան, Մ.Խարատյան
Բացակայում է՝ Ա.Նազարյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մանուչարյան

**Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| h/h | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ | Ք. Երևան, Արշակունյաց պող., 2 շենք |
| 2 | «Հայկարի» ՍՊԸ | Ք. Երևան,Կիևյան 18/6 |
| 3 | «Բեկոր-հրատ» ՍՊԸ | Ք. Երևան, Ազատության 21 շ. 31 բն. |
| 4 | «Լիմուշ» ՍՊԸ | Ք. Երևան, Դավիթ Մալյան փող., 45 շենք |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.
-համապատասխանում են բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին նախնական տվյալներով. -համապատասխանում են բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, բացի «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ի. հայտով չի ներկայացվել լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը: «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ին տրվել է շտկման հնարավորություն, վերջինս չի շտկել է անհամապատասխանությունը, և հայտը գնահատվել է անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| N | Չափաբաժնի անվանումը | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | | | | Նախահաշվային արժեք |
|---|---|---|---|---|---|---|
| | | «Հայկարի» ՍՊԸ | «Բեկոր Հրատ» ՍՊԸ | «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ | «Լիմուշ» ՍՊԸ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Սեփականության վկայական | 401800 | 486500 | 805000 | - | 350000 |
| 2 | Թղթապանակ (կադաստրային գործ) | 1245000 | 867500 | 1000000 | 850000 | 875000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5. Բոլոր մասնակիցները ներկայացրել են նախահաշվային արժեքից բարձր գնային առաջարկներ:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526 Ն որոշման՝ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի

շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, ապա վարվում են բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում առաջին չափաբաժնի մասով (սեփականության վկայական) ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է «Հայկարլի» ՍՊԸ-ն (350000 ՀՀ դրամի գնային առաջարկ), իսկ երկրորդ չափաբաժնի մասով՝ «Բեկոր-հրատ» ՍՊԸ-ն՝ (867000 ՀՀ դրամի գնային առաջարկ (ներառյալ ԱԱՀ)):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ են զբաղեցրել հետևյալ մասնակիցները՝

-Առաջին չափաբաժնի մասով՝ «Հայկարլի» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ չափաբաժնի մասով՝ «Բեկոր-հրատ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն գնային առաջարկների բացման նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահատման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ____________ Դ.Ավետիսյան

Անդամներ՝ ____________ Մ.Խարատյան

____________ Ա.Հայրապետյան

____________ Ռ.Մուրադյան

Քարտուղար՝ ____________ Լ.Մանուչարյան